

— Զալենք մեզի երթանք, այնատեղ կը տեսնենք եւ կը մտածենք:

Եւ Չաւեն ձիեն իջած այդ դրկիցներու հետ միատեղ շտկուեցաւ տուն: Դեռ տան դռանը չի հասած՝ կը լսուէին յունական անառակ երգեր ու ձայներ, որ Չաւեն բաւական կը հասկնար, եւ որ երգողները կտուրի տակ ընկողմանեալ յոյն զինուորներ էին. առանց սոցայ վրայ ուշադրութիւն դարձնելու Չաւեն ներս մտաւ: Նախ զինք դիմաւորողներն եղան իւր երեք որդիքը, որոնց ամենէն մեծը քսանհինգ տաքու երիտասարդ մ'եր կ'որաւի եւ ծանրագլուխ. եւ հօր ու որդուոյ մէջ այս խօսակցութիւնն տեղի ունեցաւ կամաց ձայնով.

— Ի՞նչ տեսակ մարդ է, Ներսէս, այս յունաց մեծաւորը:

— Ի՞նչ. գիտնամ, հայր, իբր քառասուն տարու՝ քաղցրալեզու, քաղաքավար մարդ մը կ'երեւայ. ոչխար մը մորթել տուաւ այն ձեւով, որ իբրեւ թէ փողը պիտի վճարէ, մեծ կը խօսի՝ ինքզինքը այնպէս կը ցցնէ, իբր թէ կայսեր շատ ծանօթ մէկն է: Հարցուց թէ այս տունն ո՞ւմն է, հարցուց թէ Արփենին ո՞ւմ աղջիկն է, Վարդանաբերդի, Մամիկոնեանց իշխանուհուոյն, Գրիգոր իշխանին վրայ տեղեկութիւնք փնտրեց: Հրամայեց, որ իր զինուորներուն պէտք եղածը արուի, վճարմունքը խոստացաւ կայսերական գանձէն շուտով հասցնել:

— Պրոկոպիոս է այդ մարդուն անունը,— հարցուց դաժանութեամբ Չաւեն:

— Ոչ, հայր, Թումայ է իր անունը:

— Մայրդ, աղջիկները ո՞ւր են:

— Ամենքը ներսն են, չերեւցան օտարներուն:

— Հիմա քովը ո՞վ կայ:

— Տերտերը միայն մնաց, ուրիշ ամենքը գնացին:

— Մտնենք ներս, բարեկամք, եւ տեսնուինք այս յունական բանակին կոտորտութիւններուն հետ,— ըսաւ Չաւեն իր դրացիներուն: